ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 32

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

04-ը հոկտեմբերի 2018թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 25-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատումը:

   (Զեկուցող **Ա.Վ. Ցուցուլյան**)
2. 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հասատատումը:

   (Զեկուցող **Ա.Դավթյան**)
3. ԵՊՀ ԻՄ-ի 2019թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկումը:

   (Զեկուցող Ա. Ցուցուլյան
4. Ընթացիկ հարցեր:

   4.1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում ընտրովի անդամների համամասնությունների և ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինների

հատկացումը:

(**Զեկուցող Ա. Ցուցուլյան**)

4.2. ԵՊՀ ԻՄ –ում պրոֆեսորադասախոսական կազմի առանց մրցույթի տարբեր պաշտոններում հրամանագրման մասին:

(**Զեկուցող Ա. Ցուցուլյան**)

4.3. ԵՊՀ ԻՄ-ում ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար մրցույթ հայտարարելու մասին:

(**Զեկուցող Մ. Աթոյան**)

4.4. ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆ.մ.գ.թ. Կ. Հովսեփյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցը:

(**Զեկուցող Մ. Աթոյան**)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատումը›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը կազմվել է հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագիրը, ուսումնական ժամանակացույցները, խորհրդակցվել է ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ, քննարկվել է տնօրենության նիստում: Տնօրեն Ա. Ցուցուլյանը նշեց, որ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ. դոկտոր Մ. Միքայելյաը էլեկտրոնային նամակով առաջարկել է ժամանակացույցում կատարել

հետևյալ փոփոխությունը. ժամանակացույցի 8-րդ կետը՝ «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2018թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» և 10-րդ կետը՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը» դեկտեմբերից տեղափոխել հունվար կամ փետրվար ամիսներին

Արտահայտվեցին – Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, Վ. Աղաբաբյանը, Մ. Ճաղարյանը, Մ. Մխիթարյանը:

Մասնավորապես ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը նշեց, որ այդ հարցերի ժամկետները կապված են նաև ԵՊՀ-ի գիտխորհրդի համապատասխան ժամանակացույցի հետ, և պետք է համապատասխանեցվի: Մյուս ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

ՈՐՈՇՈՒՄ 32/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 28-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատումը» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք թվով 12 անվանական կրթաթոշակ, որից 10-ը ԵՊՀ ԻՄ-ի բուջեի հաշվին, իսկ 2-ը արտաբուջետային (Վ. Սարգսյան, Մ. Մելքոնյան): Ա. Դավթյանը նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել ԵՊՀ ԻՄ-ում գործող անվանական կրթաթոշակների հավակնող ուսանողների անունները:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Արտաշեսի Շահնազարյանին, «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Արթուրի Ղազարյանին, «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի համար «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Էլինա Իշխանի Խաչատրյանին, «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի համար «Պատմություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Վանուհի Սամվելի Գևորգյանին, «Համլետ Կարայան» անվանական կրթաթոշակի համար «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Անգին Հրաչիկի Ծատուրյանին, որոնք համաձայն ԵՊՀ ԻՄ-ում գործող իրավական ակտերի կարող են հավակնել վերոհիշյալ անվանական կրթաթոշակներին իրենց ցուցաբերած առաջադիմությամբ և հասարակական ակտիվությամբ:

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը: Նա առաջարկեց հարգել ֆակուլտետների գիտական խորհուրդների կայացրած որոշումները և վերոհիշյալ ուսանողներին 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակում նշանակել անվանական կրթաթոշակ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 32/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի 2019թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկումը» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, որ ժամանակի ընթացքում մենք պետք է հասնենք նրան, որ ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը հաստատվի լուրջ ուսումնասիրություններից հետո: Նա նշեց, որ ներքոհիշյալ ցանկը (տես հավելված 3) քննարկվել է տնօրենության նիստում, վճարաչափերը վերջնական չեն, այն կհստակեցվի նախարարության կողմից հաստատվելուց

հետո: Ա. Ցուցուլյանը նշեց, որ այս մասնագիտությունների ցանկը կազմելիս խորհրդակցել ենք նաև մարզպետարանի կոմպետենտ մասնագետների հետ, մասնավորապես պարզվեց, որ Տավուշի մարզի թվով 46 դպրոցներում կա Ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի խնդիր:

Որոշեցին

Որոշում 32/3

Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

4.1 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում ընտրովի անդամների համամասնությունների և ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինների հատկացումը›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ա. Ցուցուլյանը նշեց, որ համաձայն ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 23-րդ կետի և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 7-րդ կետի անհրաժեշտ է հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում ընտրովի անդամների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները (տես հավելված 4): Նա նշեց, որ գործող գիտական խորհրդի կազմը հրամանագրվել է համաձայն հավելված 4-ի, որտեղ ընտրովի անդամների համամասնությունները որոշվել են ըստ ստորաբաժանման մեծության և ամբիոններից ընտրվել է միակ համամասնաճյուղային ամբիոնը, տնօրենի կողմից նշանակովի անդամներում ընտրվել են համեմատաբար մեծ պրոֆեսորադասախոսական կազմ ունեցող ամբիոնների վարիչները և կարևորագույն ստորաբաժանումների ղեկավարները, այսպիսով ընդհանուր առմամբ ունենք թվով 35 գիտական խորհրդի անդամ, որից 17-ը տնօրենի

կողմից նշանակովի և ի պաշտոնե, 9-ը ուսանողներ, որոնց ներկայացրել է ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհուրդը և 9-ը ընտրովի անդամներ ԵՊՀ ԻՄ-ի տարբեր ստորաբաժանումներից համաձայն հավելված 4-ի:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը և Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վ. Ավագյանը:

Մասնավորապես Մ. Զուրաբյանը առաջարկեց Հեռակա ուսուցման բաժնին հատկացնել 1 ընտրովի տեղ գիտական խորհրդում, իսկ Վ. Ավագյանը՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչին ընդգրկել տնօրենի կողմից նշանակովի անդամների ցուցակում:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը հարցը դրեց քվեարկության:

Բաց քվեարկությամբ (24 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ) ***որոշեցին***

Որոշում 32/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 7-րդ կետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում ընտրովի անդամների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները, համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4.2 Լսեցին - « ԵՊՀ ԻՄ –ում պրոֆեսորադասախոսական կազմի առանց մրցույթի տարբեր պաշտոններում հրամանագրման մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, պաշտոնների հավակնորդները պետք է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնեն համապատասխան ամբիոն, այնուհետև ամբիոնը նիստում հարցը քննարկելուց հետո նիստի քաղվածքը հիմքերի հետ ներկայացնում է Գիտակազմակերպական բաժին, վերջինս ուսումնասիրելով ներկայացված նյութերի համապատասխանությունը ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան իրավական ակտերի հետ ներկայացնում է ՄՌԿ բաժին հրամանագրման:

Որոշեցին

Որոշում 32/5

1. Ընդունել ի գիտություն:

4.3 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ում ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար մրցույթ հայտարարելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ամբիոնի վարիչի պաշտոնն ընտրովի է և պաշտոնի տեղակալումն իրականացվում է բաց մրցութային ընտրության միջոցով, իսկ ընտրությունների կարգին կարող եք ծանոթանալ ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում՝ http://ijevan.ysu.am/documents/work-regulations/ :

Նշվեց, որ մրցույթը անցկացվելու է ներքոհիշյալ թափուր պաշտոնների տեղակալման համար.

1. Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ,
2. Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ,
3. Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ,
4. Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,

5. Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
6. Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
7. Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
8. Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ,
9. Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
10. Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչ,
11. Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչ,

<u>Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին կարող է մասնակցել</u> այն պրոֆեսորը կամ դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Բացառություն են կազմում արվեստի բնագավառի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները պետք է լինեն ՀՀ նկարիչների միության կամ ՀՀ դիզայներների միության անդամ: Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող թեկնածուներն ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին երկրորդ անգամ կարող են մասնակցել միայն ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ՝ տնօրենի թույլտվությամբ: Արգելվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող թեկնածուների մասնակցությունն ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին՝ երրորդ ժամկետով:

<u>Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները պետք է ունենան</u> առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ և վերջին 5 տարում տպագրված մենագրություն, դասագիրք, կամ առնվազն 5 հոդված՝ տպագրված ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկված պարբերականներում: Բացառություն են կազմում արվեստի բնագավառի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները, որոնք պետք է ունենան առնվազն 10 տարվա

գիտամանկավարժական աշխատանքի ստաժ և վերջին 5 տարում մասնակցել են հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների:

Ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցները, մեկամսյա (***2018թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2018թ. նոյեմբերի 10-ը, ժամը 13:00***) ժամկետում ներկայացնում են.

1. դիմում՝ տնօրենի անունով,
2. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
3. ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) պատճենը,
4. գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,
5. հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը,
6. որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում), մասնագիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Փաստաթղթերը ներկայացվում են ԵՊՀ ԻՄ-ի կադրերը սպասարկող ավագ մասնագետ Ն. Աբազյանին ներքոհիշյալ հասցեով՝ ՀՀ Տավուշի մարզ, Ք. Իջևան, Ուսանողական 3:

Մ. Աթոյանը նշեց, որ մրցույթը ճիշտ անցկացնելու և վերահսկելու նպատակով կազմվելու է որակավորման մանդատային հանձնաժողով ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի նախագահությամբ (կազմը ամբողջությամբ տես հավելված 5): Հայտարարությունը 2018թ. հոկտեմբերի 10-ին տեղադրվելու է ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում, լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք դիմել ԵՊՀ ԻՄ –ի որակավորման մանդատային հանձնաժողովի նախագահ Ա. Դավթյանին, կամ գիտական քարտուղար Մհեր Աթոյանին: Այնուհետև Մ. Աթոյանը խնդրեց ֆակուլտետի դեկաններին մանրամասն ծանոթանալ համապատասխան

ընթացակարգին, ժամանակին ֆակուլտետներում ձևավորել մրցութային հանձնաժողովներ և անցկացնել քննարկումներ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 32/6

Հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 11-րդ կետը, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 14-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի որակավորման մանդատային հանձնաժողովի կազմը, համաձայն հավելված 5-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4.4 Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆ.մ.գ.թ. Կ. Հովսեփյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2018թ. հոկտեմբերի 01-ի թիվ 3 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Կարեն Հայկի Հովսեփյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի

առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Կարեն Հայկի Հովսեփյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆ.մ.գ.թ. Կարեն Հայկի Հովսեփյանը ԵՊՀ ԻՄ-ում (2015թ.-ի սեպտեմբերի մեկից) 3 տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա ունի գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների անհրաժեշտ փորձ և արհեստավարժ է: Կարեն Հովսեփյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների միջին գնահատականը 4.76 է:

Կ. Հովսեփյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2015 թ.-ին: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո նա ունի 3(երեք) հրատարակած գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին›› N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել ‹‹գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր

գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն›› կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Կարեն Հայկի Հովսեփյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը քվեարկության դրեց Կարեն Հայկի Հովսեփյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) ***որոշեցին***

Որոշում 32/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու **Կարեն Հայկի Հովսեփյանի** գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին›› N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական

համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու **Կարեն Հայկի Հովսեփյանին** դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու **Կարեն Հայկի Հովսեփյանին** շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա.Վ. ՅՈՒՅՈՒԼՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ